

ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱԶԲԸ ԲՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆՆ
ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՌԻ-
ԹԵԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅՈՎՀ. ՏԵՐ. ՄԻՒԱՔԵԱՆՅԻ

Գեռահաների գրականութիւնը երկու գլխաւոր հագւածների մերածեցինք¹⁾ առաջինի մէջ ամփոփելով հաքիաթը, Առոբինզոնի պատմածքը, զրոյցն ու պատմածքը՝ պարզեցինք, որ այդ բանահիւսութիւնները բնորոշում են քաղաքակրթական-պատմական ասոբիճանները, և յիշելով կենսագրութիւնը, իրական (ռէալ) աշխարհից առաջ նիւթերը (պատմութիւն, աշխարհագրութիւն ու բնական գիտութիւնները), բանասփեղծութիւններն ու պարբերական հանդէսները՝ այս ճիւղերն էլ ի մի ամփոփելով նոյն ասոբիճանների լրացուցիչ ու լուսաբանող գարրեր անւանեցինք: Աւքեմն հիմա զանալով այս երկրորդ հագւածին՝ սկսենք բելեփրիսպական-պատմական գրւածներից, որոնք միջին դիրք են բռնում, և զանալով զուր պատմական նկարագրութիւններին կամ պատկերներին՝ կը սկսենք այսպիսով իրական (ռէալ) աշխարհը. կենսագրութեան, բնական գիտութիւնների, ճամբորդական նկարագրութիւնների վրայ խօսելով՝ կ'անցնենք ոգանաւորներին, դրամատիկական գրւածքներին ու վերջապէս պարբերական մատուլին:

Ա. ՊԱՏՄԱԿԱՆ-ԲԵԼԵՍՐԻՍՏԱԿԱՆ ԳՐԻԱԾՔՆԵՐ ԵԽ ԶՈՒՏ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախ վեր առնենք բելեփրիսպական ձեի վերածւած պատմական գրւածքները, որոնց հեղինակներն օգուր քաղելով բանասփեղծին շնորհւած ազագութիւնից՝ պատմանիների մէջ դէպի պատմա-

¹⁾ Տես Մուրճ, 1898, № 9, 10—11.

կան կեանքը հարցասիրութիւն արծարծելու համար՝ մէջ են բերում մրացածին անձեր, պատմականների հետ յարաբերութեան մէջ են դնում և դունագեղ պատկերների շնորհով գրաւում են դեռահաս սրբերը: Եթէ այս կարգի գրւածքներն աւելի համակերպւած լինեին լնթերցողների պահանջներին, կարելի էր Սորբինզանից ու կուպէրից յեպոյ նրանց ձեռքը բալ: Խնչուիս պատմական վէսպերի, նոյնպէս էլ պատմածքների գլխաւոր անյարմարութիւններից մէկն այն է, որ նրանք ընդհանրապէս բարձր ոճով են գրւած լինում և մին էլ որ սիրայինը նրանց մէջ շատ անգամ անթոյլարելի եղանակներով է նկարագրւում: Այս էրուական բարբը սակայն այդ գրւածքներից դուրս ձգելու ոչ հնարաւորութիւն կայ և ոչ էլ պէտք, քանի որ հին, վերին աստիճանի պափկանկայր, բարոյակրթիչ ուղղութիւնից հիմա ձեռք են վերցնում, դասական երկերն անխոռվ սրբով դասաւանդութեան նիւթ լնտրելով: Այս կարգի պատմածքների ու վէսպերի մէջ նկարագրւած ուժեղ և կենսալի բնաւորութիւնները կենտրոնացնում են գեւահասների ներքին աշխարհը և ասպագայ կեանքումն էլ նրանց առաջնօրդ հանդիսանում: Պատմական վէսն անշուշտ աւելի զարգացած օրիորդների ու պատմաների ընթերցանութեան նիւթ կարող է դառնալ: Ժողովուրդն ու գեռահաս սերունդը շատ թերի կամ ամեննեին գաղափար չունենալով պատմական երևոյթների ու նրանց պահանջանութեան մասին, ժամանակակից ու ասպագայ կեանքի վրայ էլ շատ սահմանափակ հայեցւածքներ է ունենում: Ահա նախ բելլետրիստական դրւածքներով հարցասիրութիւն զարգացնելով՝ պատմութիւնովն էլ հետաքրքրւելու ձգուում կառաջացնէիք նրանց մէջ: Թէև, ինչու առաջին հարուածում յիշեցինք, Տէնը միայն վեր առած կեանքի ժամանակակից հեղինակների երկերն է իսկական պատմական համարում, սակայն նորագոյն գրականութեան մէջ այնպիսի գրիչներ են ձեռք զարկել այդ գործին, որ երկել գեռ երկար ժամանակ ընթերցող հասարակութիւնը դիւթւած կը մնայ նրանց հմայիչ ձեռագործներով:

Պատմական կեանքից վեր առած պատմածքներից պահանջում են որ և է միջադէպի կամ շրջանի ճշգրիտ ու վարահելլի պատկերներ: Գործող անձերի կեանքն ու կացութիւնն այնպէս

պէսք է նկարագրել, որ նրանք իրանց ժամանակակից պայմանները մեզ տկնչացրնի պարկերացնել կարողանան։ Կան այնպիսի գրւածքներ, որոնց բովանդակութիւնը ոչ միայն պարմական չէ, այլ և մինչև անգամ հեղինակի կուսակցական միտումներից զերծ մնացած չի լինում։ Հմտութիւնից զուրկ գրողներն էլ շատ անգամ վեր են առնում ու պարմական յացնի անձին են գլխաւոր գերբ տալիս և այսպիսով հենց իրանց ձեռքով բանագեղծութեան թերը կորափում, նրան ազարութիւնից զրկելով։ Մինչդեռ ընդհակառակը պէսք էր որ սպեղծւած տիպարներն իբրև գլխաւոր գերակագործներ հանդիսանացին, որպէս զի հնարաւորութիւն լինէր արւեստի պահանջման համապատասխան՝ նիւթերը պարմական խիստ պայմաններից անկախ մշակել։ Նաև անգամ՝ էլ անուններն ու թւականները, միջանկեալ ու կարեւորութիւնից զուրկ անձերն ու եղելութիւնները ծանրաթեռնում են գրւածքը և թոյլ չեն տալիս, որ լինթերցողը պարզ պեսնել ու հետամուս լինել կարողանայ, թէ պարմական ոյժերն ինչպէս են գործում։ Խնչպէս պարմական գլրւածքների ու դասագրքերի մէջ, նոյնուհետ էլ վէպերի ու պարմածքների մէջ պարկերագմների յաճախակի և ընդարձակ նկարագրութիւններն այնքան մժնացնում են պափկերը, որ քաղաքակրթութեան կենսագույն ճառագայթներն ազօպանալով կարծես պարհական ու կողմնակի ցոլքի պէս գալիս ու անցնում են նրանց վրացից։ Այսպիսով լինթերցողը փոխանակ որ և է ժողովրդի սովորական կեանքի պատկերը տեսնելու՝ նրա առժամանակեաց կրքերի տիրագին տիսարանին է հանդիսարես լինում։

Պարմական վէպերի ու պարմածքների օրինակելի հեղինակներ համարում են Սկով, Ալէքսիս, Ֆրայմագ, Շեֆէլ, Յ. Ֆ. Մայէր, Հառով, Կլայստ։

Հայկական գրականութիւնը թէև ունի քիչ շատ պարմական վէպեր ու պարմածքներ (Ծերենց, Բաֆֆի, Մուրացան), սակայն բուն պարանեկական ու ժողովրդական գրւածքներ՝ ոչ եւ քանի որ այս այսպէս է, պահանջ կայ արդեօք եղածներից փոխադրութիւններ անելու։ Եթէ պարմական հարուստ բովանդակութիւնով զեղուն վէպեր փոխադրելը բաւականին ևանշնորհակալը գործ է, հապա ի՞նչ յոյս կարող էինք ունենալ մեր նոյնանման վէպերի փո-

խագրութիւնից Խմ կարծեքով աւելի լաւ է, դեռահասը մի քիչ ուշ և ուղղակի բնագրերը ձեռք առնէ քան չոր ու ցամաք, անսիրու անհօգի կցկցանքները, որոնց անշահ նմուշներից շատ տեսնում են ուրիշ ազգերի գրականութեան մէջ:

Զուա պատմական նկարագրութիւնները հին աղգերի ընդանեկան, հասարակական, պատերազմական կեանքից զբաղմունքների, զւարձութիւնների, արդ ու զարդի, շինութիւնների և այլն աւելի գունաւոր պատկերներն են ներկայացնում: Այս կարգի գրածքները, որոնք գրականութեան մէջ պատմական պատկերներ են անւանւում, պատմական վաղանցուկ անցքերից անկախ՝ ներկայացնում են նշանաւոր որ և է շրջանի քաղաքակրթական տրեական բնորոշ երկեցթները: Պատմական պատկերներին իբրև օրինակ կարող են ծառայել Ալբրէտո Ռիխտերի գրածքները, որոնք որքան էլ հետաքրքրական լինէին զարգացած ու հարցասէր պատանուն, այնուամենայնիւ պատմական վէպերի ու պատմածքների հրապոյը չին կարող ունենալ: Որոշ աստիճանի զարգացման հասած պատմանին միայն ձեռք կ'առնէ այդ նկարագրութիւններն անցած գնացած կեանքի մասին աւելի ճիշտ զարգափար կազմելու համար քան դասագրքերն են բալիս:

Բ. ՆՇԱՆԱԿՈՐ ԱՆՁՆԱԿՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ինչպէս յայգնի է, կենսագրութիւնը պատմութեան դասաւանդութեան սկզբում առանձին նշանակութիւն ունի: Եթէ զրոյցներից յետոյ, որոնց մէջ անհարական կեանքն է զբաղեցրել մանկաներևակայութիւնը, անմիջապէս պատմական բարդ ու ընդարձակ երկեցթներին անցնելու լինէինք, անշուշտ աննպատակ գործի ձեռնարկած կը լինէինք: Այս պատմառով էլ մանկավարժութիւնը դասաւանդութեան առաջին շրջանում անձնաւորութիւնն է ներկայացնում իբրև պատմական կեանքի շարժիչ (մորոր), ինկարի ունենալով որ անհարի կեանքն աւելի պարզ միութիւն է ներկայացնում: Քան ժողովրդինը Դեռահասը զարգացման որոշ աստիճանի հասնելով հետզհետուէ վերահասու է լինում, որ այս կամ այն նշանաւոր անձնաւորութիւնն իսկապէս ժամանակակից պատմական կեանքի արբաղրութիւնն է, որ նրա ներքին աշխարհն էլ նոյն օրէնքներով է զեկավարում, ինչպէս ժողովրդինը, և որ միայն հանճար-

ներին է յաջողւում իրանց ժամանակից մի քայլ աւելի առաջ անցնել:

Մինչդեռ բելեսրիստական-պատմական գունագեղ գրւածքները գրաւում են ընթերցողի սիրով բանագրեղձական ազար թափառված կենսագրութիւնը հետաքրքրում է ու հիանում նրան խսկական կեանքի չքնաղ ու ազդու արդայացութիւններով։ Ընդիր կենսագրը նախ ապագայ խորհրդաւոր կեանքի նշոցները վեր հանելով ապա ներկայացնում է պատմանեկական հասալի ձգումների շարժառիթներն ու լրագրանումները ու վերջապէս հասուն շրջանի բնաւորութիւնն ու գործքերը այն չափով նկարագրում, որ չափով որ ինկարի առնւած ընթերցողներին հասանելի կը լինեն։ Այս կենսագրութիւնները դեռահասին թէ ուրախութիւն և թէ հաճոյք են պարհառում և թէ բարձրացնում են նրան՝ միոքը պարզելով ու զգացումներն ազնւացնելով։ Անկախ բնաւորութեան տէր մարդու կեանքի ազդու հոսանքին ուշի ուշով ու ոգեսրութիւնով հերեող մարդար անհարի մէջ էլ մոտապարփերներից առաջանում են ձգումների ցանկալի հոսանքներ այնուհետ, ինչպէս հարիկ հասրիկ կաթիլները, ոլոր մոլոր վրակները բնական ազդեցութեամբ միախառնւելով ու որոշ ուղղութիւն բռնելով, զգալի ոյժ են արդարութում։

Կենսագրական նորարակին ծառայող երեք գլխաւոր գեսակներ կան գրականութեան մէջ։ Մէկը վիպական ծեսով ինքնակենսագրականը, որի արժանաւորագոյն ներկայացուցիչ Դիկէնսի հիանալի «Դաւիթ Կուպերֆիլդն» է և Լեւ Տոլստոյի «Մանկութիւն», պատմանեկութիւն ու երիտասարդութիւն։ Այս գեսակի և խսկական կենսագրութեան մէջ տեղն է բռնում Գէօթէի «Իմ կեանքի ճշմարտութիւնն ու բանաստեղծութիւնը» շար բազմակողմանի ու խռարագննին երկասիրութիւնը։ Մեր խօսքն այսպեղ, ի հարիէ, այդ տեսակների մասին չէ, որոնց միայն առաջինը շնորհիւ իր վերին առարիժանի թարմ ու հիւթալի բնաւորութեան՝ մանկական գրականութեանն ևս նւիրել է բազմապիսի գեղեցիկ փոխադրութիւններ։ Որքան կենսական ոյժ կայ այդ գրւածքում, որ հազարաւոր էջերի անշըշան քամուքին էլ, յիսուն երեսնոց գրքոյին էլ, կեանք ու արել է դաշիս։ Կենսագրութեան գլխաւոր նորարակը, ասում է Գէօթէն,

«մարդուն նրա ժամանակակից հանգամանքներում ներկայացնելն է»:
 Հետեւաբար առանձին նոյն իսկ հանճարաւոր անհատի կենսագրութիւնը թերի է, երբ նրա շրջապատող կեանքը, ինչպէս այդ պահանջում է փիպասանութիւնն էլ, անդես է առնւած կամ թերի նկարագրած։ Տաղանդն ու հանճարն էլ իրանց ժամանակի արդիւնք են։ Նրանք օժգուած լինելով իւրացուցման ու մշակման հսկայական ոյժերով՝ արդաքոյ կարգի կերպարանափոխութեան են ենթարկում իրանց մասակարարւած նիւթերը։ Բայց, ի հարկէ, այդ արդակարգ իմացականութեան շնորհով նրանք մի քայլ էլ ժամանակից առաջ են անցնում, ու այնպիսի իդէաներ յացփնագործում, այնպիսի մեծագործութիւններ են կարարում, որ եպնորդները միայն պատմական կեանքի բնական բերմամբ՝ շատ անդամ բոլորովին նրանցից անկախ՝ հասնելով նոյն աստիճանին, նոր վրահասուեն լինում այն ոգիների մեծութեանը։ Այս ընդհանուր բեսակէտից անցնելով մանկավարժականին՝ մէջ բերենք Դր. Հ. Լիցի մի կարևոր յօդւածից¹⁾ հետեւեալ հարուածը. «Ո՞րքան ուսուցիչներ կան արգեօք, որ կարող են իրանց համար պնդել, թէ կարող են իրանցից աւելի մեծ մարդու կեանքը պապաւորիչ ու օրինակելի կերպով պատմել։ Արդեօք կարող են նրանք այդ բանն աւելի լաւ անել՝ քան ինքեանք այն մարդիկը, որոնք մեծ մասով իրանց անդին իւրապատում կենսագրութիւններն են մեզ յետ թողել։ Որքան էլ որ մեծ կասկածանքով վերաբերէին «մեռած» տառին, որքան էլ որ կենդանի խօսքին, առ երևոյթս նախամեծարութիւն դալու իրաւունք տւնենալ կարծէին, այնուամենայնիւ, մեր փորձառութեան համաձայն, գրած խօսքը միջին ու բարձր դասագրանների վրայ յաճախ աւելի զօրաւոր ազդեցութիւն է գործում։ ԶԵ որ հէնց գեռահաս սերունդն է, հէնց մանուկն է, որ ամենից աւելի զգայուն սիրու ունի դէպի ամեն, մի մեծ, ազնիւ, սքանչելի բան։ հէնց նրանց ամենից հեշտ է ոգեսրելը։ Ապա շարունակելով նա ասում է, որ կենսագիրը կարող է միայն այն դէպքում խոր ազդեցութիւն գործել, երբ նա գեղակ է մեծ մարդու ամբողջ կեանքին և ոչ թէ նրա կեանքի միայն առանձին գծերին։ Ըստ լարւած մտքով ու հետաքրքրութիւ-

¹⁾ Այս աղբիւրն էլ վերջը կը նշանակւի.

նով հետեւած պէտք է լինի վեր առած կեանքի զարգացման ընթացքին, ականաբես եղած լինի նրա շատ փորձերին, թէ աջողութիւններին և թէ անաջողութիւններին, թէ նրա ջանքերին, հոգաբերին և թէ ուրախութիւններին...

Հիմա դառնանք մեր աղքատ կեանքին և հարց առաջարկնք, թէ արդեօք բութի է նա մեզ այնպիսի նշանաւոր անձնաւորութիւններ, որոնց կեանքը կրթիչ արժէք ունենար դեռահաս սերնդի համար Այժ, կը պարասիստամեմ ես. այդ մարդիկը գոյութիւն ունեցել են և ունին, բայց նրանց ցանկալի կենսագրութիւնը՝ ոչ։ Թէ՛ քաղաքակիրթ աշխարհներում գործող երևելի անհայներն ապշեցնում են մեզ իրանց հիանալի կեանքի մեծամեծ հնարագիրութիւններով, խորախորհուրդ իդէաներով, բարձր ձգութներով, այնուամենայնիւ մեր նշանաւոր գործիչներն էլ կարող են այն բեսակետից օրինակելի լինել, որ նրանց կեանքը հարկադրւած է լինում ասիական աներևակացելի խոչընդուների դէմ մաքառելով զգալի արդիւնք առաջցնել։ Եթէ նրանց մոքի ու սրբի արդադրութիւնները համաշխարհացին հռչակ վայելողների հետ համեմարութեան էլ հկարողանան դրւել, նրանց բնաւորութեան ոյժն ու բարեբարոյ կեանքը կարող են ազգել դեռահասի ներքին աշխարհի վրայ։ Մի Ալիշանի, մի Պոօշեանցի, մի Աղայեանցի կեանքը հայ սբարանու համար բոլորովին այլ խորհուրդ ունի՞քան Բենեամին Ֆրանկինինը, Պետալոցցունը, Գէօթէինը... Հայի զաւակը, հայրենի խեղճուկ ու խաւար կեանքի այդ արդադրութիւնը, կարդալով առանց այն էլ լուսաւոր աշխարհի վուսաւու ասդղերի կենսադրութիւնը և ասլադաբալ այդ մութ ու յուսահագական կեանքի հոսանքին դառնալով՝ պէտք է որ բնականաբար նրա աչքերը շլանային՝ շրջապարող թանձր խաւարի մէջ խարխափելու սրիպելով, նրա վրայ պէտք է որ մի գիտակ վհագութիւն գար այն և իւր հայրենի կեանքի մէջ խոր վիհ բեսնելով։ Միթէ հնարաւոր է անցնել, վեհերու սրբով կը մոմրար նա։ Այն, մի վհագիր, սիրա կրայինք նրան, ով դու եռանդուն պարանի. որես քո ժողովրդի մեծ գործիչներին, ահա նրանք ձեռք են մեկնում քեզ, ճանապարհ են ցոյց տալիս։ Այդ մարդիկը երբէք չեն վհագել ու չեն վհագում. ժողովրդի յառաջադիմութեան ծառայող սուրբ սէրը նրանց միշտ յառաջ և յառաջ է մղել։

Ընարիր այդ նուիրական շատ իղներից այն, որը սրբիդ մօտ է, գնա այդ ուղղութիւնով և դու կը տեսնես, որ նա էլ քեզ լոյս աշխարհ կը հանէ: Համոգւթիր, մենք կը յորդորէինք նրան, որ այդ փշոր, այդ բազմորգել արահետներով զգալի արդիւնք առաջացնող մեր գործիչն էլ քիչ հիացման արժանի չէ:

Բայց արդեօք ացդպիսի խրախուսական կենսագրութիւններ արդէն պատրաստել ենք մենք, — ահա հարցը: Եթէ մինչև անգամ մանկական հմուտ կենսագիրներ էլ ունեցած լինէինք, այդ մարդիկ անճարացած պիտի մնացին, երբ զրիչ վեր առնելու լինէին՝ ազգացին երեւելի անձերի պատրանեկալան ու նամանաւանդ մանկական կեանքի գէթ արւերագիծը ներկայացնելու համար: Մեր ծնողների սգիստութիւնը մի կողմից, մեր կենսագրելի անձերի անփութութիւնն ասենք թէ՞ մի գրեսակ համեստութիւնը միւս կողմից, պատճառ են եղել, որ այսօր միայն շատ աննշան ու կցկուր գրեկեկութիւններ են մնացել մեր կենսագրական գրականութեան մէջ: Խնչ գիտենք մենք օրինակ Արովեանցի, Նալբանդեանցի, Շանշեանցի, մեր գեռ երեկւայ այս գործիչների կեանքի արշալոյսի մասին: Բարոյական պարտականութիւն ունին մեր նշանաւոր գործիչները իրանց բեղմնաւոր կեանքի այդ խորհրդաւոր շրջանի նկարագիրը դեռահաս սերնդին ժառանգութիւն թողնելու:

Մեր ժամանակակից գործիչներից ամենից լաւ կատարեց այս պարսականութիւնը պ. Դ. Աղայեանցը «Մուրճ»-ում: Ապա պ. Պոօշեանցը իր «Յուշիկներ»-ով սկսեց նոյնը, բայց իր գերդաստանի ծագման աղնւականութիւնը ապացուցանելու հետամոռութիւն ցոյց տալով մի գրեսակ սիսալ սկզբնաւորութիւն արեց: Բայց և այնպէս, այս մասը մի կողմ թողնելով՝ ընթերցողն այս գրքում կարդում է հեղինակին և նրա ժամանակակից նշանաւոր գործիչներին վերաբերեալ բաւականին հերաքրքրական գեղեկութիւններ: Ցանկալի էր, որ մի գնահատող մեկնենս գտնելու, այս կենսագրութեան շարունակութիւնն էլ բավագրել գար: Մէկի կենսագրութիւնը պէտք է ցոյց տար հայ պատանուն, թէ ինչպէս գեղջկական խեղճուկ ու խեղսուկ կը սնքից ինքնաշխատութիւնով հնդզհերէ հայրենի մատւոր հսրիզանի վրայ բարձրանում է մի բազմակողմանի բազանդի մէր մարդ, միւսինը պէտք է ցոյց տար, թէ ինչպէս նոյն հանգա-

ամանքների դէմ մաքառելավ ժողովրդի սրբից ու հոգուց խօսող մի ինքնարիպ Պոօշեան է առաջանում, մի բեղմաւոր Բաֆֆի, մի հայրենասէր խօսնակ ու աշխատութեան հսկայ Ալիշան, մի կամքի ներկայացուցիչ ու անձնւէր Գ. Սրծունի:

Առևսաւոր աշխարհների երևելի անձերի կենսագրութիւններն աւելի վաղ գրաւել են մեր արևմբեան հայրենակիցների ուշադրութիւնը, բայց ժամանակի ընթացքում որքան որ արևելեաններիս մէջ աւելացել են այդ կարգի գրւածքները, նոյնքան էլ նրանց մէջ պակասել են¹⁾:

Մեր Կովկասեան հայ գրականութեան մէջ նորագոյն ժամանակներս լոյս են դրասել թարգմանաբար առանձին գրքոյներով Բենիամին Ֆրանկլինի, Վաշինգտոնի, Գարվիլդի («Փայտաշին խճիթից» մինչև սպիտակ դուռը), Աբրահամ Լինկոլնի, Ուրբենօնցի մանուկի (Նկարիչ Ռաֆայէլի), Զորջ Ստեֆէնսոնի, Վիքուոր Չիւզօ՞ի և Գաւիթ Լիւինգտոնի (Բագու, 1894). իսկ Աղբիւ ըումն նոյնպէս կարեոր Խասհակ Զէմսի, Անդերսէնի, Ֆիրդուսիի, որոնք դեռ արդարպւած չեն²⁾: Արևմրեան բարբառով սրանցից մի երկուսն են հրապարակւել Կուկ նաւապետի և Յովհաննա Դ'Արկի հետ և բացի սրանցից Ալիշանի «Յուշիկներից» քաղւածներն ու մասամբ նորագոյն գործիչները: Հ. Մինաս վ. Բժշկեանն ու Հ. Մագթէոս վ. Մ. Թէոփիլեանցն էլ ամբողջ ժողովածուներ են հրապարակւել, որոնց բովանդակութեան մասին ոչինչ չեմ կարող հաղորդել, քանի

¹⁾ Բայց այս երեսով լոկ կենսագրական գրւածքների նկարմամբ չէ որ աչքի է ընկում: Դեռ ահամներին վերաբերեալ թարգմանական գրականութիւնը արևմբեան համերի մէջ մինչև վերջին ոսուաթուրքական պատերազմը բարձրանալով հետզհետէ, այնուհետեւ արագ անկման է դիմում, իսկ մեր կովկասեան գրականութիւնն ընդհակառակը մինչև այդ դարձակէտը վեհերոր քալիեր անելով՝ ապա համեմատաբար համարձակ ընթացքով լառաջ է դիմում և ամսօր այնպիսի բարձրակէտի է հասնում, ուր երբէք չէր գտնւել: Բայց չը մոռանմաք որ համեմատական բարձրակէտի վրաէ է խօսքը: Մանրամասնութիւնները վերապահում ենք թւական զուգակշռին:

²⁾ Մասսամբ կենսագրական բովանդակութեամբ է Միլգա-Աւագեանի «Սփէնլի», նրա կեանքը, գիւղերը և վերջին ճանապարհորդութիւնը, թարգմ. (Պ). Զեռքս դեռ չէ անցել: «Մահմէդի կրանքն» էլ նոյնպէս:

որ «Հայկական մատենագիրութիւնը» անձերի անուններն էլ չէ յիշում: Հ. Բժշկեանի «Այբուբենի կարգով և համառօրու խօսքելը գոնէ ցոյց են դալիս, որ առանձին արժէք ունեցող բան չպէտք է եղած լինէին: Այվաղեան (Աբր. 8.): հրաբրակել է նոյնպէս մի ամբողջ «Նար հայ կենսագրութեանց», ինձ անձանօթ: Արևելեան բարբառով, բացի վերոյիշեալ ուշադրութեան արժանի և զնահատելի կենսագրութիւններից՝ ինքնուրոյն կենսագրութիւններ պատանիների համար զեռ մի երկու հար ունինք. Պարոյր Հայկազն («Աղբիւրում») Բաֆֆու, Գրիգոր Լուսաւորիչ: Միրիմանեանցի և Հայոց մեծ վարդապետ Սուրբ Մեսրոպ—Մելեանցի, որոնց մէջ առանձին արժէք ունի առաջինը: Մելեանցի աշխարհասիրածը գրաբար աղբիւրներից քաղլած բառերով ու գարձւածներով ծանրացնում է ընթերցումը, իսկ Միրիմանեանցինը նորից ձեռքս չընկնելով թարմ բապաւորութիւն չեմ կարող հազորդել:

Յարութիւն Արաբագեանցի կենսագրութիւնը, եթէ կեղծիք էլ չլինէր, իսկապէս թնչ հետաքրքրական բան կարող էր ներկայացնել նոյն իսկ հարցասէր զարգացած ընթերցողին: Մենեփիշեանի կազմածը Այգնեանի յիսնամեակի առիթով զեռ մի չոր ու ցամաք ուրաւագիծ է, մերեւս փափկանկար հանգամանքների բերմամբ: Երւ. Շահազիզի մեղւաշան ու լուրջ աշխաբութիւնով տեղն ու տեղը գլուխ հանած նալբանդեանցի կենսագրութիւնն էլ այնու ամենայնիւ մերնպարակի համար գրեթէ նիւթեր չունի: Արովեանցի (Ն. Տէր. Կարապետեանցի դրած) պարանեկական կեանքը հայրենիքում և երիտասարդական-ուսանողական կեանքը Դորպարում աւելի յուշիկներ է թողել, որ գնահատելի ժրաշանութիւնով հաւաքել է նրա կենսագրողը: Մանկական ու պարանեկական կեանքի նկարագրութեան թերութիւնն ունի նաև աւելի վաղ հրաբարակւած Յարութիւն ամիրա Պէզճեանինը՝ աշխաբութեամբ Մ. Պ.-ի: Յովհաննէս եպիսկոպոս Շահսաթունեանցի կենսագրութիւնը, որ հրաբարակեց նորերս սրբազն Արիստակէս եպիսկոպոս Սեղբակեանը, մեզ հետաքըքրող գրականութեանը նոյնպէս համարեա ոչինչ չի դալիս: Ի. Յարութիւնեանցի «Ստեփան Պալատանեանցը» աւելի զարգացած պարանիների ընթերցանութեան նիւթ կարող է համարւել. Խ. Մալումեանի Մոքի մշակը նիւթեր կարող է դալ դեռահասների համ-

մար կազմելիք կենսագրութեան, նոյնպէս և Ս. Երիցեան՝ Ներսէս Աշոարակեցու կենսագրութիւնը: (Նոյնը գրած է և Արծրունիների մասին):

**Գ. ԳՐՔԵՐ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ՍՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՎԱՆ
ՇՐՋԱՆՆԵՐԻՑ**

Մինչև վերջին ժամանակները գիտութեան հռչակաւոր ներկայացուցիչներն ընդհանրապէս իրանց համար մի տեսակ նւասպութիւն էին համարում գիտութիւններն ու երևելի գիւղերը ժողովրդին ու գեռահասին մասնիչի ձեւի վերածելը, զարգացման սփորին խաւերում գոնոզներին էլ նրանց հաղորդակից անելը: Այս պահճառով էլ երկրորդական ու անարժան երրորդական ձեռքերն էին այդ գերը կափարում և այսպիսով մանաւանդ անկոչ գրչակների շնորհով ժողովրդի ու գիտութեան մէջ մի մշուշ էր ոիրում: Գիտութիւնը միայն ընտրեալ դասակարգին հասանելի բան էր համարւում: Բայց այն երկոյթն էլ վերջապէս փոփոխութեան ենթարկեց. ժողովրդին սրբանց համակիր մասնագէտներ, որոնք իրանց մագիստրարաններից ու աշխարհանոցներից, հեռադիտակներից ու խոշորացոցներից դէն մի խաւար, բայց ուսումնածարաւօրցեկով էլ ուշագրութեան առնելու միտք ու սիրու ունեցան, այս անթնական երկոյթին այլ ևս չկարողացան լուռ ու անփարթեր ականագես լինել: Ինչո՞ւ և ում համար է իսկապէս գիտութիւն, արւեստ. հապա ում բարօրութեանը պէտք է նրանք ծառայեն: Միթէ պէտք էր բաւականանալ ուսումնարանի աւանդածով, որ հազիւթէ ներշնչւած է լինում հարցասիրութեան ոգւով: Եւ սկսեցին ժողովրդական-դիտական դրբեր լոյս տեսնել, բացւեցին ժողովրդական համալսարաններ, հին նախապաշարութեան թանձ քօղը պապառելով: Եւ ահա բնական գիտութիւնների ժամանակակից ուժեղ հոսանքը նախ այս շրջանից հեղինակաւոր մասնագէտների ձեռքեր շարժեց հմտալից ու մանկավարժական տաքրիկով ժողովրդական ու մասնիկան գրքոյներ հրաժարակելու: Հ. Վագնէր, Կրեպելին, Սմիլէս, Ֆոյլը՝ Գերմանիայում, Դարւին, Հեօքսլի, Ֆարալէյ¹⁾, Գայկէ

¹⁾ «Մոմի բնապարմութիւնը», որի մէջ շաղկապւած են բոլոր բնական գիտութիւններից վերառած ամենահետաքրքրական իրերն ու երևութերը: Այս գրւածքն էլ ուսւերէն թարգմանւած է:

Անգլիայում, Ֆլամարիօն Ֆրանսիայում՝ հիմնալիք արդիւնք առաջացրին և այսպիսով ապացուցին, որ պարզ ձևի վերածւած գիտութիւնն էլ կարող է իր պատկառելի բարձրութեան վրայ մնալ: Բայց երբ գիտական գրքոյնը՝ փոխանակ իր խական նպատակին ծառացելու՝ «մի ձեռքով երկու ձմերուկ բռնել է ուզում», այսինքն՝ երբ այսպէս անւանեալ «բանասփեղծական» նկարագրութիւններով համեմում են բնական գիտութիւնը ու երբեմն էլ կրօնական զգացութեանը ջերմեռանդ արդայացրութիւններ են մէջ բերում, այն ժամանակ այդպիսի գրւածքը միայն ընթերցողի սիրով պաղեցնելուն է նպաստում:

Ժողովրդի և դեռահասի համար աշխատասիրւած գրքոյները պէտք է քննութեան առնել նաև բովանդակութեան ճշգութեան գիտակետից, ապա գեսնել, թէ արդեօք այդ նիւթերը լիակարար արժէք ունին և թէ վերջապէս նրանց մշակութիւնն այնպէս համակերտած է ընթերցողների պահանջներին, որ նրանք հետաքըլքրութիւնով կարդային: Քիւնէրը, որ Նմիդի մանկավարժական հանրագիտարանում հեղինակաւոր գրչով մշակել է դեռահասների ազատ ընթերցանութեան խնդիրը, գիտական մանրամասնութիւններ չի պահանջում, եթէ դրանք մինչեւ անգամ շատ էլ հետաքըլքրական ու զբօսուցիկ լինէին. միայն ճշգրիտ մեծը և ոչ թէ նորանշանը (կուրեօգը) նա արժան է համարում մարդակարարել. միայն փորձւած ճշմարտութիւնը և ոչ թէ երկբայականն ու ենթադրականը, ըստ նրա կարծիքին, գեղ պէտք է բռնէ դեռահասների գրականութեան մէջ:

Անարւեստ գրչակները շարունակ գուտանւում են մի կողմից գիտական ծանր բնաւորութիւն կրող նիւթերի և միւս կողմից չընչին նկարագրութիւնների մէջ: Նրանք կամ շատ բան են պահանջում դեռահաս ընթերցողից, կամ՝ ոչինչ: Առանձին նկարագրական հմտութիւն է պէտք, որպէս զի գործիքների, կաղաուարների, նիւթերի, փորձի ու շատ անգամ էլ պատկերների պակասութիւնն այնքան էլ զգալի չը լինի: Անվարժ գրողները կարծում են, որ մինչեւ անգամ զանազան հեղինակներից մէջ բերւած հասուածները, ծանօթութիւնները (ցիտադները) կարող են մանկական ժողովրդա-

կան զբըոյիների համար անպատշաճ բան չհամարւել, Զարգացումով տհաս ընթերցողին խօսքի անարգել ընթացքն է դրաւում, իսկ միջանկեալ տարրերը արգելքներ հանելով տհաճութիւն են պարծառում:

ա. Բնական գիտութիւնները: Որովհետեւ Վագներն ու Կրեպելինը Գերմանիայում իրեւ օրինակելի բնագետ ու բնապատում գրողներ առանձին ուշադրութեան են արժանացել, արժէ գեանել, թէ նրանց երկերն ինչ առանձնացագիութիւններ են ներկայացնում:

Նախ մէջ բերենք Համբուրգի մասնաժողավի օժանդակութիւն դեռահասների գրւածքների քննադատութեան համար 1896 թ. մենագրութիւնից հետեւալ փողերը.

Վանգէրն առարկաները զննում է ոչ թէ իրանց շրջակայքից մեկուսացած, այլ իրու ամբողջի մասեր: Նա իր փոքրիկ ընթերցողներին չի ձևնձրացնում ոչ համակարգութեամբ և ոչ էլ խիստ գիտական հետազոտութիւնով: Միւս կողմից է, նա հեռու է մնում վայր ի վերոց նկարագրութիւններից: Նա Սպեղծողին ոչ մի մեծաբարբառ խօսք, ոչ մի մեծահնչիւն գովասանք չի շռայլում, և սակայն նրա իւրաքանչիւր տողից տեսնում ենք, թէ ինչպէս ամեն բան իմաստուն կերպով է սահմանւած: Նա երբեմն կարակի և սիրալիր ձևերով է իր նպատակին հասնում, ու, մին էլ դեսնես, ուղևորութեան ժամանակ նկարագրութիւնն ընդհագելով՝ մի հետաքրքրական բան է պարմում, օրինակ՝ այսպէս սկսելով. «Կարչիար միշ... կարծես թէ նա հէքիաթ պատմելիս լինէր: Մանուկը ջերմեռանդ սրտով ականջ է զնում, որովհետեւ հէքիաթ է թւում նրան այն, ինչ որ Վագներն ասում է, բայց սակայն կախարդւած թագաւորազունների մասին չէ խօսքը, այլ պատմւում են այնպիսի բաներ, որ ամեն օր մանկան աչքի առջևն են ¹⁾): Վագները գու-

¹⁾ Նա, օրինակ արելի, ու երկրի աներևակակելի տարածութիւնն իր փոքրիկ ունկնդիրներին հասանելի դարձնելու համար՝ նրանց հետ դէպի արել երկաթուղով ուղևորութիւն է անում և հաշւում, որ ալդ փոքրիկները զաւակ կ'ունենան, մամ ու պապ կը դառնան, նրանց թռուներն էլ նոյնպէս և ալսպէս 300 տարի անցնելուց իւրոք միան տեղ կը հասնին,

ցէ Կրեպելինից եւր մնար ժամանակակից գիտութեան գեսակէտից, բայց բնութիւնը բանասփեղծօրէն ըմբռնելում նրան ոչ ոք չէ զերազանցել:

«Կրեպելինն իր քրնական ուսմունքը դան մէջ, զրւածքում պրամախօսութեան (գիտող) ձեւն է ընդրել: Կարելի է մէկն ի մէկ օրարորդի թւայ, որ նա մի ձեւ է վերընդրում, որ Կամպէն իր Ռոբինզոնի համար նպատակայարմար էր համարել և որից վաղուց ձեռք են վերցրել: Բայց սակայն Կրեպելինը այդ եղանակն ընդրելով մի աջողակ միջոցի էր դիմել. որովհետու այն, ինչ որ ասումական նիւթերի համար աննպատակայարմար է համարում, կարող է բնական գիտութիւնների շրջանից վերցրած նիւթերի համար զերազանցօրէն օգտակար լինել, և որ այդ այլպէս է, հեղինակն ապացուցել է... Երեխաններն են, որ խալապէս առաջնորդում են խօսակցութիւնը. նրանք փոխադարձաբար իրար հաղորդում են իրանց գիտողութիւնները, միմեանց ուսուցանում են հայրը նրանց միայն դրդում է, մասածելու նիւթ է մափակարարում, այս ու այնպիզ, երբ հարկէ լինում, լրացնում և ուղղում է: Նկատում է, որ հեղինակն ամենուրեք յարդառապ աղբիւրից է քաղում, բայց և այնպէս բարձր է պահում այն խօսքը, թէ վարպետը սահմանափակութեան մէջ է երեւում: Տեսնում ես, որ նա ոչ միայն գիտնական է, այլ և մանկավարժ, որ ուսումնարանում է զործել: Ինչպէս գիտէ նա նուրը կերպով որոշել դասուվեց, դասներեք կամ դասը դարեկանի միտաշրջանները: Ինչպէս հմրալից կերպով նա իր ունկընդիրներին առաջնորդում է զէպի ուղիղը՝ առանց նոր ոոք ելնող մանուկների պէս նրանց ձեռքից բռնած պոտի-պորի ման ածելու»...

Ես էլ այս երկու հեղինակների զրւածքներից մօրաւորապէս նոյն պապութիւններն սպացայ, միայն թէ Կրեպելինի վերոյթշեալ գրւածքից չի երեւում, որ երեխաններն են դրամախօսութիւնն առաջնորդում. ոչ, այդ դերը կափարում է մեծ մասով նրանց հայրը (հեղինակը), իսկ նրանք հօր հետ նորանոր հարցումներ են առաջարկում և իւրաքանչիւրն իր խելքի կորածի չափ մասնակցում է վիճաբանութեանը ու ճշմարդութեանը հասնելուն նողասւում: Վազնէրը աւելի գունագեղ մանրանկարներով, զեկցիկ զարածներով (օրինակ Շէպի բնութիւնը՝ գրւածքում) նախ սրբինձ

ու ապա դարձողութեանն է մօգենում, իսկ Կրեպէլինը մրցողութեան ողին հրահրելով, սրում է դարձողութիւնը, վառում է հարցափրութիւնը աննշան թւացող իրերի ու երեսյթների վրայ սահիկների մանրազնին ու շադրութիւնը գրաւելով:

Անցեալ 1898 թ. Կրեպէլինի վերովիշեալ գրւածքը սուսերէն թարգմանւեց¹⁾, բայց “Յօսպիտան և օցանիութիւնն այդ աւանդան ձեւին հաւանութիւն չտւեց այն հիման վրայ, որ տրամախօս անձերի անուններն այս գրւածքում էլ գրամաֆիկականի պէս խանգարմունք ու դհաճութիւնները, տարակոյնները, կարծիքները մէջ են բերում, նրանքիրանց հասակակից քնթերցողներին էլ մրցնում են այդ գերերի մէջ, նրանց համանման մփապատկերների շարերին էլ վերարդարւելու առիթներ ներկայացնելով: Դասագուներից շատերը այս բանը փորձած կը լինեն ընթերցանութեան դասագրքերում գեղ-գեղ ընդունւած բնագիրական յօդւածների վրայ, որոնք տրամախօսական ձեւի վերածւելով աշակերդներին կարծես երեւակայութեամբ մասնակից են անում այդ վիճաբանութիւններին: Արժէր հայերէն էլ թարգմանել այս գրւածքը²⁾, որի սուսարութեան պագմառով բազմակողմանի հետաքրքրական յօդւածներից կարելի էր օրինակ հնդկեալ ընդունելու թիւնն անել. Սարդի կեանքը ջրի յարակում ու սենեակում. Շեղական լուցկիների առանձնայագրկութիւնը և սովորականները. Օճառ պատրաստելը, Թիթեռնիկի ձմեռելը, Մկների գաղթելը, Մարդու և մի քանի կենդանիների մկանքի համեմատու-

¹⁾) Տողերա գրելուց լեռու նորն հանդիսում կարդացի այս գրւածքի մի նոր թարգմանութեան գրախօսութիւնը. Առաջին թարգմանիչ Կ. Խ. Տիլսոմիրով բնագրի անռանք իսկութեամբ է թարգմանել. — Այսպիսի որոշումը կատարվել է 1898 թ. մայիսի 15-ին. Վարդի կեանքը ջրի յարակում ու սենեակում. Շեղական լուցկիների առանձնայագրկութիւնը և սովորականները. Օճառ պատրաստելը, Թիթեռնիկի ձմեռելը, Մկների գաղթելը, Մարդու և մի քանի կենդանիների մկանքի համեմատու-

²⁾) Հասորատ չգիրեմ, բայց կարծում եմ որ Վագնէրի գրւածքներն էլ սուսերէն թարգմանւած պէտք է լինին:

թիւնը, Բոյսերի շարժուսը, Զկների քունը, Սունկերի դերը օրգա-
նական աշխարհում...»

Այս գրւածքներից զայր գնահատւած են Գրուբէի Բնական
պատկերները, Բրէմ'ի Կենդանիների կեանքը, Հ. Մազիուս՝ Բոյսերի
ու կենդանիների «կեանքից», Չուղին՝ «Ալպեան աշխարհի կենդանի-
ների կեանքից», Բացի սրանցից Բրենդէլի «Պատմածքները կենդա-
նիների կեանքից», Բոյմէրի «Աւղեորութիւնը կենդանիների աշխար-
հում», Շտիլէրի «կենդանական պատմածքները» հին ու նոր ժամա-
նակներից, Կառլ Ոռոսինի «Սզար բնութեան մէջ» և անգլուհի Արա-
բէլլա Բոբլի՝ «Գիրութեան թագաւորութեան դիւթական թագաւոռ-
րութիւնը»:

Համաշխարհային մագիստրարանական վիճակադրութիւնը ցոյց-
է բալիս, որ առհասարակ ժողովուրդը բնական գիտութեանց վե-
րաբերեալ գրքեր քիչ է կարդում, որ այդ քանակութիւնը համե-
մագել չի կարելի բելլեպրագականի հետ և չպէսք է էլ համեմագ-
ւի: Սակայն եթէ այդ գրքերը հետաքրքրական նիւթերի հետ նաև
գրաւիչ ձեւերով մշակւած լինեն, անշուշփ աւելի հարցասիրութիւն-
շարժած կը լինէին: Ազագիսի գրւածքներ կազմողին հարկ անհրա-
ժեշտ է թափանցել Վագնէրի ու Կրեպելինի երկասիրութեանց ոգու-
մէց:

Մեր գրականութեան մէջ գննէ ինձ յայտնի չեն արևմրեան-
բարբառով հեղինակաւոր բնագէպների երկերից թարգմանութիւններ: Իբրև հաւաքական աշխագութիւններ լիշտակութեան ար-
ժանի է նորոգ հանգուցեալ Գալուստ Կոստանեանի Զմիւռնիայուց 1858 թ. հարտարակած «Ժանդարան հասարակաց» (Bibliothéque
populaire) 16. հայորներից բազկացած աշխագութիւնները, Վիեն-
նայի «Մագիստրական կրթական և զրոսալի գուրբակաց» մէջ մի քանիսը
և առանձին լոյս դրեսածները:

Մեր արևելեան գրականութեան մէջ հեղինակաւոր գիրնական-
ների ժողովրդական գրւածքներից թարգմանել է Ի. Յարութիւ-
նեանցը Հէօքսլիի «Տարերք բնական գիտութեան», մի առողնին քի-
միա հետաքրքրաշարժ բովանդակութիւնով ու մեթոդով. Տ. Յով-
հաննիսեանը՝ յայտնի Ֆլամարիոնի «Ասորդաբաշխութիւնը», Լ. Մե-
լիք Աղամեանը՝ Զ. Դարւինի «Աներևոյթ հողագործը» կենդանաբա-

Նութիւնից՝ շատ հերաքրքրական բովանդակութիւնով՝ եթէ բնական գիտութիւնների զանազան ճիշդերից թարգմանւածները համախմբվել, վերոյիշեալներից զատ կենդանաքանութիւնից ցիշելու ենք պրոֆ. Բողդանովի «Խժոռղները», թարգմ. Լ. Մ. Ադամեանի, Նոյնի «Թուունների աշնանային գեղագիտութիւնը» և Բնի ու Ճուի որսը միասին կաղմամած, թարգմ. օր. Ն. Օհանեանի՝ բաւականին հետաքրքրաշարժ գեղեկութիւններով, Ս. Կուզնեցովայի «Զարմանալի որդը», թարգմ. Ն. Ղուլիջանեանցի: Եերամի կեանքն հետաքրքրական ձևով նկարագրւած է այս գրքոյիում, որ—թեթև լեզով է թարգմանւած: Վ. Լունիկիչի «Կենդանների աշխարհում», թէեւ հարկեանցի, բայց հետաքրքրական երևոյթներ է բովանդակում: Նոյնը գրել է նաև «Հանրամատչելի բնախօսութիւն» թ. Հ.Հ. Լ. «Հանրամատչելի գիտական գրադարանին» շարայարւած: Ալէքսանդրապոլում վերջերս Տ. Թաշմանեանց և Ա. Զիլինկարեանց ձեռնարկել են միացած ոյժերով բնական գիտութիւններից մի շարք գրքոյների հրատարակման: Մինչև հիմա լրյա են գեսել «Կենդանների բնագրը», թէ նիւթի և թէ մշակման գեսակէտից ուշադրութեան արժանի, ապա «Մեղուներն» աւելի ընդիր, իսկ երրորդ գրքոյնը ձեռքս չհասաւ: Մամուլի դակ են ու պատրաստ են նաև ուրիշները բազմակողմանի բովանդակութիւնով:

Բուսաբանութիւնից, որքան հաւաքածս նիւթերից գոնէ երեւում է, միայն երկու գրւածք ունինք. Բէրնշտայնի «Մաղիկ ու պառոզ», շնորհալի գրչի արդիւնքը Մելիք Մուսեանի թարգմանութեամբ, և լսար Ֆիգէի «Բոյչերի կեանքը», թարգմ. Ս. Բ.: Բոյսերի արքաքին գործարանների մասին հետաքրքրաշարժ գեղեկութիւններ է դալիս, միայն թէ թարգմանական դժւար բառերը ծանրացնում են հասկանալու գործը:

Որքան որ զուտ կենդանաքանական գրւածքներ ենք թարգմանել, համարեա նոյնքան էլ քելլետրիստական ձևով նկարւած պագերներ ունինք կենդանների կեանքից: Մրանց մէջ առաջին գեղը կարելի է դալ Աւենարիուսի «Թաւամազ մեղուին», թարգմ. օր. Ն. Տէր-Մարկոսեանցի, ապա Սլիվիցիու «Խորամանկ աղւեսին», պ. Պաօշեանցի ընդիր ու հայացրած թարգմանութեամբ, կարծես հէնց ինքն է հեղինակել: Պ. Նեզվանովայի «Մուկուչի հաւիկը» կենդ-

րոնացումից զուրկ է, քանի որ իսկապէս աւելի աղւէսի քան Մուկուչի և հաւիկի կեանքն է նկարագրուում իսկ ինչ վերաբերում է նոյն Սլիվիցիու «Նապաստակ» ին իսկապէս ոչ բնապարմական և ոչ էլ բելեպրիստական դրւածք է, այլ երկուսի մէջ առկաին մնացած. ռւսուի և ոչ միւս կողմով փափառութիւն կարող է գործել:

Բելեպրիստական ձեռով ընազիտութիւնից էլ ունինք մի գըրւածք՝ Գրուբէի «Զրի կաթիլի պարմութիւնը», թարգմ. Մոսկացի Հ. Ռ. Բ.։ Նար դասագրքերում ընդունւած յայտնի յօդւածներն երեւի սրանից են քաղլւած։ Զուլու բնագիտական գրքոյներ հրադարակւեցին Պետերբուրգում Մելիք Մուսեանցի թարգմանութեամբ։ «Անձրեւ և ձիւն» Ժիվադովսկու և «Տաքութիւն և օդ», հեղ (?)։ Գ. Զաքարեանն էլ գրել է «Չուրը», որ նոյնպէս արժէր կարդալ, թէև այդ երկուսի պէս թեթև չէ։ «Անձրեւ և ձիւնը» երկբայական դարբերից ազար չէ, մշակումն էլ գեղ-գեղ անկարար է, իսկ «Տաքութիւն և օդը» զերծ չէ անձշտութիւններից։

Երկրաբանութիւնից ու աստղաբաշխութիւնից էլ թարգմանւել են յայտնի ոռու ժողովրդական գրող Ոռուբակինի «Զրոյցները բնութեան մեծ ու ահեղ երեսյթների մասին», թարգմ. Մ. Տ. Անդրէսեանցի, մի ընտիր գրւածք. և Լունիկիչի «Երկրաշարժ և հրաբուժին լեռներն» ու «Երկրի ու երկնքի մասին» գրւածքները երկու ան էլ Գիւլ Նազարեանցի թարգմանութեամբ։ Զեռքս անցել է առաջինը, որի նիւթը շապէ հետաքրքրական է, բայց ա. կիսում, որ ներածութիւն է կոչւում, օրինակները շապէ են կուրտակւած։ Թարգմանական դժւար հատկանալի բառերը քիչ չեն և գեղ-գեղ նոյն իսկ գրաբառամոլութեան պէս մի բան է աչքի ընկնում, թէև թարգմանչին կարծեմ այդ բանից հեռու մարդ պէտք էր կարծել։

Ինչ վերաբերում է արևեստներին, մեր ոչ մանկական և ոչ էլ ժողովրդական գրականութիւնը նրանց մասին գաղափար է դւել Մինչդեռ, ինչպէս այլ առիթով գետանք, նրանք քաղաքակրթութեան շօշափելի դարրեր լինելով անդես չպէտք է առնւեն։ Նար թերի կը լինէր մեր աշխարհայեացքը, եթէ գաղափար չունենացինք գոնէ ամենագործածական ու հետաքրքրական արդադրութիւնների մասին։ Միթէ քիչ թէ շապէ զարգացած մարդու պարփականութիւնը չէ բաւարարութիւն դալ մանկան օրինակ հետեւել հարցերին, թէ

ինչպէս են շինում թուղթը, ինչից և ինչպէս ապակեղէնը, շաքարը, օճառը... Հարց է, թէ ինչու մարդիկ շատ բնական բան են համարում պարմութեան, աշխարհագրութեան, լեզւի դասագրքերում կցկրուր վեղիկութիւններ դալ այդ մասին, իսկ կարարեալ գաղափար դալը՝ ոչ Զէ որ արւեստները՝ ժառայում են բնական գիտութիւնների լործագրութեանը, Կրանց վերջնական նպարակին։ Կան նիւթեր, որ ուզզակի կարելի էր միացնել այս կամ այն բնագիտական, քիմիական, բնագագամական գրւածքին, կան էլ՝ որ արժէր ու պէսպէ էր առանձին մշակել։

ԴՐԱ ՀԱՅԱՓ ՎԱՐԴԱՐ

(1870-1873)

I

(Վերջը և աջորդ թուր)

ԴՐԱ ՀԱՅԱՓ ՎԱՐԴԱՐ

ՀՕՐ ՄԵԼԻՔ ԿԱՐԱԳԵԶԵԱՐ

Է

8

ԱԵՐ